

ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի ավարտական քննության

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2011 թ. 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստերի առաջադրանքները կազմված են հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են երեք ձևով՝ ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել ճիշտ պատասխանը:

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանները կարող են լինել՝

- թվային արժեք՝ ըստ անհրաժեշտության՝ չափման միավորով,
- բանաձև կամ որևէ մեծության չափման միավոր,
- բառ, բառաշարք կամ բառակապակցություն,
- առաջադրանքի տարրերը համարակալող թվերի կամ տառերի դասավորություն, համապատասխանություն:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված գրառել առաջադրանքի պահանջը, ներկայացնել կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով):

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-24	24
Կարճ պատասխանով	25-35	11
Ընդարձակ պատասխանով	36-40	5

2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Ձ/հ	Թեմա	Համամասնություն %-ով	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	47	18
2	Ջերմային երևույթներ	19	8
3	Էլեկտրամագնիսական երևույթներ	16	6
4	Օպտիկական երևույթներ	6	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	4	2
6	Աստղագիտության տարրերը	8	3
ԸՆԴԱՄԵՆԸ		100	40

3. Ցուցումներ

ա) Կարճ և ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների պատասխանները, եթե առաջադրանքում չկա լրացուցիչ ցուցում, պետք է բերված լինեն ՄՅ միավորների:

բ) Ընդարձակ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ենթաառաջադրանքի (36-40-րդ) ճիշտ կատարման համար տրվում է 1 միավոր (առանց խնդրի լուծման ողջ ընթացքը ներկայացնելու, միայն վերջնական պատասխանի գրառման համար միավոր չի տրվում):

գ) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել, որ $\pi = 3,14$, $\pi^2 = 10$, $\sqrt{2} = 1,4$, $\sqrt{3} = 1,7$, իսկ $g = 10$ Ն/կգ:

դ) 26-րդ առաջադրանքը կատարելիս պատասխանների ձևաթղթում առաջադրանքի համարի մոտ տրված աղյուսակի համապատասխան վանդակներում որպես պատասխան պետք է գրառել ընտրված հասկացությունների միայն համարները:

Օրինակ`

26. Ա և Բ խմբերից կատարելով ընտրություն` ստացե՛ք մեկ ճիշտ համադրություն:

Էներգիայի ի՞նչ փոխակերպում է տեղի ունենում, երբ

- Ա 1) գետը հոսում է թեք հարթությամբ
2) գնդակը շարժվում է դեպի վեր
3) քարը վայր է ընկնում

- Բ ա) պոտենցիալ էներգիան` կինետիկ էներգիայի
բ) կինետիկ էներգիան` պոտենցիալ էներգիայի

Պատ`

Ա	Բ
2	բ